

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՈՑ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ

Հայերենում ձայնավորների պատմական փոփոխությունների հիմնական գործոններից մեկը շեշտն է: Շեշտի ազդեցությամբ առաջացած պատմական հնչյունափոխության ամենաաչքի ընկնող երևույթը ձայնավորների սղումը կամ ը-ի փոխվելն է: Շեշտի տակ գտնվող ձայնավորը մնում է անփոփոխ, իսկ շեշտից դուրս գտնվողը, թույլ արտասանության հետևանքով, դուրս է ընկնում հնչյունական շղթայից: Հնչյունափոխության այդ վկայություններն արդեն խիստ հաճախական են միջին հայերենի շրջանում և որոշ չափով դառնում են գրական լեզվի համար արտասանական նորմ: Հայոց լեզուն իր զարդացման ոչ մի փուլում հնչյունափոխական կանոնների այնպիսի բազմազանություններ, ինչպիսին միջին հայերենում է, չի ունեցել: Միջին հայերենում հնչյունափոխության էին ենթարկվում դրեթե բոլոր ձայնավորները և երկբարբառները: Եթե լեզվի զարգացման բոլոր փուլերում հնչյունափոխական օրինաչափությունների մի մասը, որպես կանոն, կապված է շեշտի հետ, ապա մնացած ձևերում այդ երևույթը շեշտի փոփոխմամբ չի կարելի բացատրել: Դրանք բարբառային առանձնահատկություններ են, որոնք ներթափանցել են միջին հայերենի հնչյունական համակարգի մեջ և ազդել գրա դրսևորումների վրա: XII–XIV դդ. սկզբնաղբյուրներում արդեն վկայվում են նման հնչյունափոխության ենթարկված բազմաթիվ բառեր, ինչպես՝ հաւանել-հաւանել, պահանջել-պահանջիլ, խորանալ-խորնալ, կոտորել-կոտրել և այլն:

Գրաբարում ա և ո ձայնավորները չէին սղվում կամ հնչյունափոխվում, սակայն միջին հայերենում ենթարկվել են այդպիսի փոփոխությունների: Ձայնավորների սղումը կամ անկումը բառասկզբում ձայնորոններից առաջ առավել հստակորեն դրսևորվում է բարբառներում: Այս երևույթը տիպական է հատկապես Լոռի – Զանգեզուր – Ղարաբաղ տարածքի խոսվածքներին՝ Երևան-Ռէվան, աղաչանք > դաչանք, ուղարկել > ղրկել // ղուրկիլ // ղարկել և այլն:

Ա > ը

Ա ձայնավորը գրաբարում կայուն ձայնավոր էր և հնչյունափոխության չէր ենթարկվում, մինչդեռ բարբառներում այն կրում էր փոփոխություն: Ար. Ղարիբյանը դրում է, որ ա ձայնավորը բարբառներում ենթարկվում է հնչյունափոխության շատ հաճախ և այնպիսի դեպքերում, երբ շեշտն ընկած է ա ձայնավորից հետո: Այդպիսի դեպքում կամ ա ձայնավորը վերածվում է ը ձայնավորի և կամ ուղղակի դուրս է ընկնում, օր՝

Ղարաբաղի բարբառում՝ ավետարան-ըվըտարան, աղջկան - ըխճըկան և այլն¹:

Տեղանուններում բառասկզբի ա ձայնավորը հնչյունափոխվել, դարձել է ը՝

Աճանան (դավառ Մեծ Հայքում) - Ըջանան.

Անգեղակոթ (դյուղ ՀՀ Սիսիանի շրջանում) - Ընկղակոթ²:

Ինչպես նկատում ենք՝ առաջին բառում հնչյունափոխությունը հետևանքով ճ խուլը ձայնեղացել, ջ է դարձել, իսկ երկրորդում՝ դ ձայնեղը խլացել, դարձել է կ:

Եթե դասական հայերենում ա-ն համեմատաբար կայուն ձայնավոր էր և շեշտազրկությունից չէր հնչյունափոխվում, ապա ետդասական և հատկապես միջին հայերենի շրջանից սկսած այդ հատկությունը խախտվում է: Ըստ որում, միջին հայերենի արևմտյան տարբերակներում և մասնավորապես կիրիկյան հայերենում հնչյունափոխությունը ընդգրկում է հատկապես երեք և ավելի վանկանի բառերը³:

Ունենք բազմավանկ տեղանուններ, որոնց առաջին վանկի ա ձայնավորը դարձել է ը՝

Սարաչեն (դյուղ Մեծ Հայքում) - Սրաչեն.

Վարդաշատ (դյուղ ԼՂՀ Հաղբուծի շրջանում) - Վըրգնաշատ - Վըրդնաշատ. Բարևածառ (ուխտատեղի Ղարաբաղում) - Պըրևածառ.

Թաղասեռ (դյուղ Հաղբուծի շրջանում, ըստ Աճառյանի՝ սեռ նշանակում է սայր, ծայր, բերան) - Թղասսեռ.

Պառավաքար (դյուղ Տավուշի շրջանում) - Պռավաքար:

Տեղանուններ կան, որոնց առաջին և երկրորդ վանկերի ա ձայնավորները միանգամից հնչյունափոխվել են ը-ի, ինչպես՝

Պառավաթումբ (դյուղ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի դավառում) - Պռաթումբ.

Վաչադան (դյուղ Ղափանի շրջանում) - Վչըդան - Վչքան:

Հ. Մուրադյանը դրում է, որ երկվանկ բառերի թեքման ժամանակ վերջնականի ա ձայնավորը ընկնում կամ փոխվում է ը-ի, օր. քաղաք-քաղքի (սեռ.), քաղքէն (բացառ.), դատաստան > դատստան - դատստներոյն և այլն: Այս փոփոխությունը տեղի է ունենում հայերենի այն տարբերակներում, որոնք վերջնականային հիմնական շեշտից բացի ունենին առաջին վանկում նաև երկրորդական շեշտ, և վերջինիս պատճառով է, որ երկվանկ բառերի թեքման ժամանակ առաջին վանկի ա-ն մնում է անփոփոխ⁴:

Տեղանունների առաջին վանկի ա-ն մնացել է անփոփոխ, միայն երկրորդ վանկի ա-ն է փոխվել ը-ի, իսկ վերջնականներում փոփոխություն տեղի է չի ունեցել, քանի որ դրանք թեքված ձևեր չեն՝

1 Տե՛ս Ա. ռ. Ղ ա ռ ի բ յ ա ն. Հայ բարբառագիտություն. Երևան, 1953, էջ 110:

2 Տեղանունների այս և հետագայում բերված օրինակները վերցված են «Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարանի» հինգ հատորյակից:

3 Տե՛ս Հ. Մ ու ռ ա դ յ ա ն. Հայոց լեզվի պատմական քերականություն. Կ. 1, Երևան, 1982, էջ 76:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 77:

Ճապղղը (բերգ Մեծ Հայքի Հաշայանք գավառում, ըստ Աճառյանի՝ Ճապղղ նշանակում է՝ տարածված, փռված)- Ճապղղը:

Ջուխտ Պառավածառ (Բարևածառ, ուխտատեղի Ղարարաղում)- Ջուխտ Պառավածառ:

Վարագհան (գյուղ Արևմտյան Հայաստանում)-Վարզըհան-Վարզհան (այս տեղանվան երկրորդ և երրորդ վանկերի ա ձայնավորներն են փոխվել ը-ի):

Ա-ն սղվել է՝

Կամարակապ (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Կամրակապ:

Հ. Մուրադյանն իր աշխատության մեջ նշում է, որ X-XI դդ. վիմական արձանագրություններում ու ձեռագրերի հիշատակարաններում վկայվող այն օրինակները, որոնք վերաբերում են բառամիջի ձայնավորների սղմանը, առավելապես վերաբերում են բառաթեքմանը: Բառական ուղիղ ձևերում ձայնավորների կորստի հնագույն վկայությունները (այն էլ եզակի օրինակներով) XI դ. այն կողմ չեն անցնում⁵: Հ. Մուրադյանի հավաստմամբ՝ Ս. Ավագյանի «Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն» գրքի վերջում բերվող աղյուսակում օրինակների գերակշռող մասը ձայնավորի սղում ունեն բառաթեքման ընթացքում, իսկ այն օրինակները, որոնց մեջ այդ երևույթը առկա է բառական ուղիղ ձևերում, ավանդված են ավելի ուշ շրջանից:

Ա > է

Ա ձայնավորի հնչյունափոխվելը է-ի կարելի է բացատրել ետին շարքի ձայնավորների՝ դեպի առաջին շարքը անցնելու ձգտմամբ: Ա > է տեղի է ունենում Քեսաբի բարբառում՝ նախաչեչտ վանկերում, մեծ մասամբ ունգայիններից առաջ: Այս փոփոխությունը հեշտացնում է արտասանությունը: Մի շարք բառերում բառասկզբի ա ձայնավորը փոխվել է է-ի, ինչպես՝

Ագարակ (լքյալ գյուղ Մեղրու շրջանում) -էգրակ -էգրեկ -էկրեկ:

Արամուս (գյուղ Աբովյանի շրջանում) -Երամոնս:

Արունք (գյուղ Արևմտյան Հայաստանում) -Էրունք, Էրուն, Էրեն:

Արծն (քաղաք Մեծ Հայքում) -Էրզն:

Ավերակ (գյուղ Արևմտյան Հայաստանում) -Էվերեկ:

Արգինա (գյուղաքաղաք Մեծ Հայքում) -Էրգինա, Էրկինե, Էրկին:

Արճեչ (քաղաք Մեծ Հայքում. անունը կապում են Արգիշտի I-ի հետ)- Էրճիչ-Էրժիչ:

Ի > Ը

Ի ձայնավորը հնչյունափոխվել, դարձել է ը տեղանվան առաջին վանկում՝

Նիգատուն (գավառ Մեծ Հայքում) - Նգատուն:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 87:

Ըստ Զահուկյանի՝ ա) ի -ն կարող է ընկնել (սղվել)՝ թշնամի+ական- թշնամական, բ) ի-ն միանալով ա -ի հետ կարող է տալ ե՝ ասարի+ական - ասարեկան⁶:

Մեր կողմից դուրս գրված տեղանունները, որոնցում տեղի է ունեցել ի+ա-ե հնչյունափոխություն, բարդ բառեր են: Բարդ բառի առաջին բաղադրիչի ի-ն, միանալով ա հոգակապին, վերածվում է ե-ի: Այս հնչյունափոխությունն է ենթարկվել Անահիտ (հեթանոսական տաճար Մեծ Հայքում) տեղանունը, որն ունի հետևյալ անվանումները՝ Ոսկիածին-Ոսկեծին, Ոսկիամայր-Ոսկեմայր, Ոսկիահատ-Ոսկիհատ: Վերջին տեղանվան մեջ ա հոգակապը սղվել է:

Ետգրաբարյան հայերենում ի>ը հնչյունափոխություն տեղի է ունեցել Տիգրանակերտի, Կարճևանի բարբառներում: Ինչպես միջին հայերենում, այնպես էլ ժամանակակից հայերենի բարբառներին մեծ մասում ի-ն շեշտազրկությունից սղվում կամ փոխվում է ը-ի: Ի-ի այդ հատկությունը, եթե մի կողմից ավանդական է ու ժառանգված հին լեզվից, ապա մյուս կողմից էլ գործուն օրինաչափություն է հայերենի դրսևորումների մի ճնշող մասում:

ե > է

Ե ձայնավորի հնչյունափոխությունը սահմանափակվում էր մասնակի դեպքերում: Այն, ինչպես գրաբարում, այնպես էլ գրական լեզվում, հնչյունափոխության չէր ենթարկվում: Բառասկզբի ե ձայնավորը բարբառներում դարձել է է:

Ունենք ե>է հնչյունափոխության ենթարկված հետևյալ տեղանունները՝

Երևան (ՀՀ մայրաքաղաքը)- Էրևան.

Երկայն (գյուղ Արևմտյան Հայաստանում, ըստ ավանդության՝ գյուղը հիմնադրել է բարձրահասակ մի մարդ, որի անունով կոչվել է Էրկան՝ բարձրահասակ իմաստով)- Էրկան, Էրքան.

Երկնիսա (գյուղ Արևմտյան Հայաստանում, երկայնանիստ բառի կրճատ ձևն է)⁷- Էրկենիս, Էրկենիգ, Էրկինիս, Էրկինուս.

Երանոս (գյուղ Արտաշատի շրջանում)- Էյրանիս-Էրանոս.

Երանածոր (գյուղ Զանգեզուրի գավառում) - Էրնածոր:

ե > ի

Գրական լեզուն ունի պարզ է ձայնավոր, որը փոխարինում է գրաբարյան ե ձայնավորին և է երկբարբառին, որը գրաբարում արտասանվում էր

6 Տե՛ս Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները. Երևան, 1974, էջ 93:

7 Տե՛ս Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս տ. Տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ը - ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ Տեղանունների բառարան). Հ. II, Երևան, 1988, էջ 244:

էյ: Գրաբարի է-ն գրական լեզվի մեջ ճանաչվում է նրանով, որ կրում է հնչյունափոխություն՝ պարտեզ - պարտիզի:

Ունենք տեղանուններ, որոնց առաջին վանկի ե-ն հնչյունափոխվել է ի-ի՝

Թեղուտ (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Թիղուտ.

Բեխ (գյուղ Մեծ Հայքում)- Բիխ.

Սեպ (լեռնագագաթ ՀՀ-ում)- Սիպ.

Սևտիկին (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Սիվտիկին:

Առաջին երեք օրինակներում ե>ի հնչյունափոխություն եղել է բառերի ուղղի ձևերում, մինչգեռ այն ընդհանրապես վերաբերում է բառաթեքմանը:

Դև (գյուղ Նախիջևանում) - Դիվի:

էգ. Աղայանը ենթադրում է, որ այդ բառի ե-ն ունեցել է է-ի արժեք, որի հետևանքով էլ կատարվել է այդ հնչյունափոխությունը: Բայց քանի որ հայերենում էլ կապակցություն չի եղել, ուստի և այն դրվել է եւ (դեւ)⁸. էգ. Աղայանը իրավացիորեն դև բառում ե>ի հնչյունափոխությունը գիտում է ե -ի նախնական մի այնպիսի որակ, երբ այն ունեցել է երկբարբառակերպի արժեք: Նման օրինակ է նաև վերը նշված Սևտիկին-Սիվակի տեղանունը:

ե>ի հնչյունափոխություն տեղի է ունեցել նաև բառերի երկրորդ վանկում, ինչպես՝

Ավերակ (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Ավիրակ.

Եզեզն (գյուղ Մեծ Հայքում)- Եզիզն.

Պարտեզ (գյուղ Կարսի մարզի Օլթիի օկրուգում)- Պարտիզ.

Պոչենց (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Պոչինց:

Այգպիսի փոփոխություն կատարվել է նաև բառավերջում

Եզնադոմեր (գյուղ Մեծ Հայքում)- Եզնագոմիր.

Բայազեա (քաղաք Արևմտյան Հայաստանում)- Բայազիտ.

Թաղասեռ (գյուղ Հաղբուլթի շրջանում, ըստ Հր. Աճառյանի՝ սեռ=սայր, ծայր, բերան)- Թաղասիռ.

Առտեր (կղզի Վանա լճի հարավային մասում)- Արաի.

Խնձորեսկ (գյուղ Գորիսի շրջանում)- Խնձորիսկ:

ե>ի հնչյունափոխություն է կատարվել բարդ բառերի երկրորդ բաղադրիչներում, որոնք ունեն բայական իմաստ՝

Մառագետ (գյուղ Մեծ Հայքում) - Մառադիտ (գետ - գիտենալ).

Մուշեղաչեն (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Մուշեղչին (չեն-չի-նել):

ե > ը

Եթե բառասկզբում ե-ին հաջորդում է դ, երբեմն այս ե-ն վերածվում էր ը-ի, ինչպես՝ եզունգ>ըզունգ, ըզունգաքար և այլն⁹:

8 Տե՛ս է գ. Ա ղ ա յ ա ն. Գրաբարի քերականություն. Հ. 1, Երևան, 1967, էջ 137:

9 Տե՛ս Ս. Ղ ա գ ա ը յ ա ն. Հայոց լեզվի համառոտ պատմություն. Երևան, 1981, էջ 224:

Ե՛>ը հնչյունական օրենքը գործել է տեղանուններում բառամիջի դիրքերում, ինչպես՝

Դեղնաքար (բերդ Կիրիկիայում)- Դեղնաքար.

Շենադբյուր (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Շենադբյուր.

Շենգավիթ (գյուղ ՀՀ Շահումյանի շրջանում)- Շենգավիթ.

Հերթ (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Խերթ:

Ո > Է

Հ. Մուրադյանն իր աշխատության մեջ Ս. Ավագյանի բերած օրինակներից առավել հետաքրքիր է համարում բառակազմի դիրքի համար XIII գ. բերվող ոք (մին) գերանվան բարբառային էք (մին) վկայությունը: Այստեղ ո-ն գտնվում է շեշտի տակ և դրանում կատարված ո>է անցումը այլ կերպ չի կարող բացատրվել, քան ո>ուէ>է հաջորդական հնչյունափոխությունը¹⁰:

Վիմական արձանագրությունների իր հավաքածուից Ս. Ավագյանը մի հետաքրքիր վկայություն է բերում է բառամիջի դիրքի համար: Դա փոքրավոր բառի բարբառային փոքրավել հնչյունափոխված ձևն է, որի մեջ կատարված ո>է հնչյունափոխությունը կապվում է Ղարաբաղի և Սյունիքի տարածքի այսօրվա բարբառներում արձանագրվող հնչյունափոխության հետ¹¹:

Փրավոր աղբյուրներում է>ա>այ հնչյունափոխության առաջին վկայությունները արձանագրվում են XIII գ. և համարյա այն նույն վայրերում, որտեղ կատարվել է ի>է>ա>այ փոփոխությունը: Ի ձայնավորի մեջ կատարվել է ի>է հնչյունափոխություն, ապա այս երկու ձայնավորների հետագա փոփոխությունը գնացել է մի միասնական ճանապարհով: Այս երևույթը արձանագրվում է Կարճեանի, Մեղրու, Ագուլիսի, Ղարաբաղի տարածքի որոշ խոսվածքներում:

Տեղանունների բառարանում ունենք Մարդաստան (գավառ Մեծ Հայքում) տեղանունը իր հնչյունափոխված տարբերակներով՝ Մարդոցք, Մարդոց-էք, Մարդուցայք: Այս անունը ծագմամբ կապված է մարգ(եր) ցեղանվան հետ¹²: Հիշատակում են Եղիշեն, Սեբեոսը, Ղ. Փարպեցին և միջնադարի հետագա պատմիչները:

Մարդաստան տեղանվան ստան-ը հոգնակիակերտ է, որ առաջին անգամ հանդիպում ենք միջին հայերենում: Ըստ Ար. Ղարիբյանի՝ այն լիառատ կերպով գոյություն ունի Արդվինի բարբառում և դրվում է ձայնավորով վերջացող բառերի վրա¹³:

Հավանաբար Մարդաստանը կոչվել է նաև Մարդոցք (մարդականցից մեկը, մինը), ապա ո>է հնչյունափոխությամբ դարձել Մարդոցէք, է>ա հնչյունափոխության տարբերակը չունենք՝ Մարդոցաք, ունենք Մարդու-

10 Տե՛ս Հ. Մ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 102:

11 Տե՛ս նույն տեղում:

12 Տե՛ս Տեղանունների բառարան. Հ.Յ.Յ., Երևան, 1991, էջ 727:

13 Տե՛ս Ար. Ղարիբյան. նշվ. աշխ., էջ 138:

ցայք, այսինքն՝ այս տեղանվան մեջ կատարվել է հետևյալ հնչյունափոխությունը՝ ո>է>այ:

Ո > ու

Ձայնավորների երկբարբառացման մեջ առավել հայտնի երևույթ է հին ո և ե պարզ ձայնավորների փոփոխությունը: Հայտնի է, որ հին հայերենի դրի առման շրջանում այս տառերով արտահայտվող հնչյունները միանշանակ էին բառի մեջ դրաված բոլոր դիրքերում: Դրանք բառասկզբի ու բառամիջի դիրքերում այժմ միարժեք չեն: Ակնհայտ է, որ այդ ձայնավորները բառասկզբի դիրքում կրել են փոփոխություն՝ պարզ ձայնավորից վերածվելով երկհնչյունների՝ ո>vo, ե>ye: Պատմական այդ փոփոխությունը, անշուշտ, տեղի է ունեցել ոչ միանգամից, այլ աստիճանաբար:

Ո>ու անցումն այսօր արձանադրվում է կիլիկյան և արևելյան տարածքի մի շարք բարբառներում: Այս հնչյունափոխությունը չունի դիրքային պայմանավորվածություն, եթե նկատի չունենանք, որ կիլիկյան բարբառներում այն կատարվում է շեշտի տակ: Այն չեզոք է նաև իր հնչյունական շրջապատի նկատմամբ, այսինքն՝ դործում է համարյա բոլոր բաղաձայնների հարևանությամբ: Կան նաև այնպիսի բարբառներ (Մեղրի, Կարճևան), որոնց մեջ ո>ու փոփոխությունը, բառամիջից բացի, տեղի է ունեցել նաև բառասկզբում, երբ այլ բարբառներում այդ դիրքի ո-ի դիմաց այլ համապատասխանություններ են:

Հայերենի բարբառների դրաված մի այլ տարածքում, երբ ո-ի երկբարբառային արտասանությունից անցում է կատարվում դեպի մենաբարբառացում, մենաբարբառի մեջ սկսում է աստիճանաբար դերիչիսել դրա առաջին բաղադրիչը՝ ու-ն, որից և մենաբարբառացումը դնում է ուo // ուէ>ու ճանապարհով՝ Հ. Մուրադյանը դտնում է, որ դա կատարվում է այն ժամանակներում, երբ բառասկզբի դիրքում ուo II ուէ-ից առաջ դեռ չէր առաջացել վ բաղաձայնը (կամ ւ ձայնորդը)¹⁴:

Ըստ Հ. Մուրադյանի՝ այս տարածքում երկբարբառի պարզման ազդակը թերևս եղել է նախնական ձայնավորի (ո-ի) ավելի սուղ (նեղ, փակ) արտասանության հասնելու ձգտումը, որը կատարվում է շրթնայնություն սահմաններում: Այս հիմքի վրա է, որ այս բարբառներում ո-ի դիմաց այժմ ունենք ու // ու պարզ ձայնավոր: Այս անցումը հատուկ է Մեղրու, Կարճևանի, Ադուլիսի և դրանց հարող վայրերի խոսվածքներին (թեև կարող են լինել և այլ վայրերում. օրինակ, այն մասամբ տարածված է նաև Ղարաբաղի ու Սյունիքի խոսվածքներում՝ հատկապես բառամիջի դիրքում): Առավել հստակ ու հետևողականորեն օրինաչափությունը դրսևորվում է Մեղրու բարբառում, որտեղ հին ո-ի դիմաց ու // - է ոչ միայն բառասկզբում, այլև բառամիջում՝ նաև շեշտից դուրս ընկած դիրքում:

Բառասկզբի ո ձայնավորը դարձել է ու հետևյալ տեղանուններում

Ողական (ամրոց, բերդ Մեծ Հայքում) - Ուղկան.

Օշական (գյուղ Աբաղածոտնի մարզում) - Ուշական:

14 Տե՛ս Հ. Մ ու ռ ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 96:

Ո՞ր փոփոխություն է եղել տեղանունների առաջին վանկում՝ Նորչիրական (բղեշխություն Մեծ Հայքում)- Նուշիրական (Գ. Զահուկյանը գտնում է, որ Նուշիրական-ը իրանական NO-Serakan-ի (?) առաջին բաղադրիչի՝ հայերեն համարժեքով փոխարինված, այսինքն՝ հայերենի հետ բաղարկված կազմություն է)¹⁵:

Նոր Գյուտ (գյուղ Նախիջևանում) - Նուրգյուտ:

Սոս (գյուղ ԼՂՀ Մարտունու շրջանում) - Սուս, Սուգ:

Մոխրաբերդ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Մուխրաբերդ:

Ո՞ր հնչյունափոխություն է եղել տեղանվան երկրորդ վանկում՝

Սալորջուր (գետ Հայկական լեռնաշխարհում)- Սալուրջուր:

Ո՞ր հնչյունափոխություն է եղել վերջնից վանկում՝

Խառակունիս (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Խառակունիս:

Ո՞ր հնչյունափոխություն է եղել տեղանունների վերջին վանկում՝

Անգեղակոթ (գյուղ ՀՀ Մխիթանի շրջանում) - Անգեղաղուկոթ:

Արտխոնք (գյուղակ Արևմտյան Հայաստանում) - Արտխունք:

Սամսոն (գավառ Տրապիզոնի նահանգում) - Սամսուն:

Ընդհանուր առմամբ՝ ո՞ր անցումը հնչյունափոխական հին երևույթ է, որի համար գրավոր վկայություններ կան միջին հայերենի սկզբնագիր աղբյուրներում: Ամենահին վկայությունները վերաբերում են XI դ.: Հ. Մուրադյանի հավաստմամբ՝ հաջորդ դարերում ավելի հաճախանում են այս երևույթի վկայությունները՝ ինչպես ձեռագրերի հիշատակարաններում, այնպես էլ վիճական արձանագրություններում: Դրանց մեջ հատկապես հետաքրքիր են ժողովրդախոսակցական լեզվում գործածվող այն բառաձևերը, որոնց մեջ լրիվ միագնված է դրանց նախաձևի հետ ունեցած կապը, ըստ այդմ՝ նաև գրանցում կատարված հնչյունափոխական երևույթը: Այդպես են, օրինակ, հին՝ մինչև որ կապակցությունից առաջացած և միջին հայերենի շրջանում լայն գործածություն ստացած մինչուր, ինչուր, ինչուրվի բառաձևերը իրենց կիրառություններով («մինչև» կապի իմաստով)¹⁶:

ՈՒ > Վ

ՈՒ-ն միանալով այլ ձայնավորների հետ կարող է փոխվել վ-ի կատու+ի>կատվի: Պետք է նշել, որ այս փոփոխությունները ժամանակակից գրական լեզվում գործուն օրինաչափություններ չեն, այլ կամ ժառանգված են հնից, կամ դործում են համաբանությամբ: Զահուկյանը գտնում է, որ նորագույն փոխառությունների ու գրական նորակազմությունների դեպքում այդպիսի փոփոխություններ չեն կատարվում՝ քաղաքացիական >քաղաքացիական, թեկնածու+ական >թեկնածուական և այլն¹⁷: Գրաբարում ու-ն ձայնավորին նախորդող դիրքում պատմական հնչյունափո-

15 Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 413:

16 Տե՛ս Հ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 115:

17 Տե՛ս Գ. Զահուկյան. ժամանակակից հայերենի տեսության հիմունքները. Երևան, 1974, էջ 93-94:

խուլթյամբ դարձել է վ: Ունենք բառամիջում ու ձայնավորով հետևյալ տեղանունները՝

Սաղուասոնք (գյուղ Մեծ Հայքում)-Սաղվասոնք (վա հնչյունակապակցությամբ կորուստով դարձել է՝ Սաղսոնք)։

Աղուանք (երկիր Անգրկովկասում)- Աղվանք։

Աղուանիս (գյուղ Արևմտյան Հայաստանում)- Աղվանիս։

Ատրուանք (գավառ Մեծ Հայքում)-Ատրվանք։

Ի և ու ձայնավորների հնչյունափոխական հատկությունը առավել կամ նվազ հետևողականությամբ շարունակվում է նաև ետդասական շրջանում: Ըստ Հ. Մուրադյանի՝ այն շարունակում է դործանել որպես կենդանի օրինաչափություն պատմական փուլի առանձին դրսևորումներում, մյուս կողմից էլ, այլ դրսևորումներում այն դադարում է այդպիսին լինելուց և մնում է որպես անցյալի ժառանգություն¹⁸:

ՈՒ > ո

Ձայնավորների ետադարձ շարժման նույն օրինաչափությանը ենթարկվել է նաև ու ձայնավորը՝ փոխարկվելով օ-ի: Այս դեպքում ու-ից օ-ին անցնելը կատարվել է ու ձայնավորի արտաբերության ժամանակ լեզվի բարձրացման աստիճանի փոփոխությամբ՝ վերինից դեպի միջին:

ՈՒ>օ հնչյունափոխությունը հիմնականում արձանագրվում է այն բարբառներում, որոնց մեջ տեղի է ունեցել ո>ու փոփոխություն: Հ. Մուրադյանը իրավացիորեն նկատել է, որ Մեղրու, Կարճևանի, Գորիսի, Ղարարաղի և Հարակից այլ վայրերի խոսվածքներում այդ օրինաչափությունը դրսևորվում է բացառապես այն դիրքերում, որոնց մեջ ու-ն չի հաջորդում ձայնեղ պայթականների ու պայթաչփականների, օր.՝ թուղ>թօղ, թօղնը, թուղը>թօղը, թօխպ, նուռն>նօռնը և այլն: Հակառակ սրանց՝ ձայնեղ պայթականներից ու պայթաչփականներից հետո ու-ն կամ մնում է անփոփոխ, կամ «քմայնանում է», օր.՝ դուռն>դուրք, տուռնը, ձուկն>ձուկուռն, ծուկնը: Հ. Մուրադյանը գրում է, որ այս դիրքում ևս որոշակի դեր են խաղում ձայնեղ հպականները, որոնք իրենցից հետո պահանջում են առավել նեղ բացվածքի ձայնավորներ և այդ պատճառով էլ արգելակում են ու-ի ձգտումը դեպի ավելի լայն արտաբերություն: Մատենագրության մեջ վկայություններ կան ու>օ հնչյունափոխության վերաբերյալ: Ամենահին օրինակները X դ. են՝ արտահայտված ո գրով:

Տեղանունների առաջին վանկի ու ձայնավորը հնչյունափոխվել է ո-ի՝ Մուղնի (գյուղ Աշտարակի շրջանում) - Մողնի։

Ջուխտակ եղցի (գյուղատեղի Մեծ Հայքում) - Ջոխտակ եղցի։

Սուրիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Սորիկ։

Սուրբ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Սորբ։

Սուրբ Տիկին (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Սորտիկին։

Ու>ո հնչյունափոխություն է տեղի ունեցել տեղանունների երկրորդ վանկում՝ Նեղուց (գյուղ Թումանյանի շրջանում) - Նեղոց։

18 Տե՛ս Հ. Մ ու Ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 81:

Ջրմուխտ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Ջրմուխտի:
 Նույնպիսի փոփոխություն է տեղի ունեցել բառավերջում
 Ջրտու (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Ջրտո.
 Արամուս (գյուղ Աբովյանի շրջանում) - Երամոնս:

Ու > ը

Ու ձայնավորը հնչյունափոխվելով դառնում է ը բառասկզբում, բառամիջում, բառավերջում: Տեղանունները հնչյունափոխության են ենթարկվել բառասկզբում և բառամիջում:

Ու ձայնավորը միջին հայերենում բառասկզբում ղ-ից առաջ որոշ բառերում վերածվում էր ը-ի կամ օ-ի, ինչպես՝ ըղուղ (ուղեղ), օղղեմ (ուղղեմ) և այլն¹⁹:

Միջին հայերենում գործող այս հնչյունական օրենքին է ենթարկվել Ուղտաձոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Ըղտաձոր տեղանունը:

Ու > ը հնչյունափոխություն է տեղի ունեցել տեղանունների առաջին վանկում՝ Ռումբասար (լեռնագագաթ ՀՀ-ում) - Ռմբասար, Ռրմբասար.

Ջուռնատուն (գյուղ Նախիջևանի գավառում) - Ջոռնատուն.

Լուսահոնք (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Լսոնք:

Այս հնչյունափոխությունը կատարվել է նաև երկբորգ վանկում՝ Ընկուղիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Ընկըղիկ:

Երբ ձայնավորների այս տարբերությունը հնչյունափոխություններին ավելանում են նաև բաղաձայնների փոխադրեցական և այլատիպ հնչյունափոխությունները, հայոց տեղանունները գառնում են հայերենի հնչյունական համակարգի քննության խիստ արժեքավոր աղբյուր:

ЧЕРЕДОВАНИЕ ГЛАСНЫХ В АРМЯНСКИХ ТОПОНИМАХ

АНУՍԻ ԱՅԱԳՅԱՆ

Р е з ю м е

Топонимы — один из самых древних спутников человека. Они позволяют эксплицировать как архаичные, так и новейшие факты истории языка. Историческое чередование гласных звуков в армянском языке, обусловленное позицией ударения, характерно и для грабара, и для среднеармянского, и для современного армянского языка. Исследование, проведенное в основном на материале разнообразных топонимов с чередующимися гласными, почерпнутых из пяти томов "Словаря топонимов Армении и прилегающих областей", привело к выявлению позиционных чередований гласных в начале, в середине и в конце основы диалектной лексики. В грабаре при переносе ударения гласные *ա, ո, ւ* не чередуются, тогда как в среднеармянском чередованию подвергаются все гласные. Современный армянский язык (восточноармянский, западноармянский) унаследовал как первую, так и вторую закономерность.

19 Տե՛ս Ա. Ղ ա գ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 225: